# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացվելիս ֆինանսական աջակցություն տրամադրելու մասով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետ՝ անդամ պետություններ,

առաջնորդվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 115-րդ հոդվածով,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում կատարել հետեւյալ փոփոխությունները.

1) 20-րդ հոդվածի 1-ին կետի առաջին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Սույն պայմանագրի 92-րդ հոդվածով նախատեսված կարգով՝ անդամ պետությունների կողմից արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացվելիս Միության մարմինների գործունեության ֆինանսավորումը, ինչպես նաեւ Հանձնաժողովի կողմից ֆինանսական աջակցության տրամադրումն իրականացվում են Միության բյուջեի միջոցների հաշվին: Միության բյուջեի միջոցների ձեւավորման եւ ծախսման կարգը սահմանվում է «Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին» հիմնադրույթով:».

2) 92-րդ հոդվածի 9-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել «, այդ թվում՝ արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծերի իրականացման միջոցով՝ սույն պայմանագրի 27-րդ հավելվածին համապատասխան» բառերով.

3) «Արդյունաբերական համագործակցության մասին» արձանագրությունը (նշված պայմանագրի թիվ 27 հավելված) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3 րդ կետով.

«3. Միջկառավարական խորհրդի կողմից սահմանվող ցանկում ներառված՝ արդյունաբերության ճյուղերում անդամ պետությունների կողմից համատեղ կոոպերացիոն նախագծերի իրականացմանն աջակցելու նպատակով Հանձնաժողովի խորհուրդը կարող է Միության բյուջեի միջոցների հաշվին դրանց իրականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին որոշում ընդունել:

Անդամ պետությունների կողմից արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացվելիս ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակով Միության բյուջեում հերթական ֆինանսական տարվա համար նախատեսվող միջոցների ծավալը որոշվում է Միության բյուջեի հաստատման տարվան նախորդող ֆինանսական տարում՝ անդամ պետությունների բյուջեներ հատուկ, հակագնագցման եւ փոխհատուցման տուրքերից մուտքերի ընդհանուր գումարի տոկոսային հարաբերակցությամբ:

Նշված տոկոսային հարաբերակցության չափը եւ արդյունաբերության ճյուղերում անդամ պետությունների կողմից համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացվելիս ֆինանսական աջակցության տրամադրման ձեւը սահմանվում են Բարձրագույն խորհրդի կողմից:

Անդամ պետությունների կողմից արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծերի ընտրության եւ իրականացման, ինչպես նաեւ Միության բյուջեի միջոցների հաշվին ֆինանսական աջակցության տրամադրման

կարգը սահմանվում է Միջկառավարական խորհրդի կողմից հաստատվող հիմնադրույթին համապատասխան:

Սույն կետով նախատեսված ֆինանսական աջակցության մեխանիզմը կիրառվում է 202*3* թվականի *մայիսի* *25*-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացվելիս ֆինանսական աջակցություն տրամադրելու մասով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից 5 տարվա ընթացքում:

Ֆինանսական աջակցության մեխանիզմի կիրառումը երկարաձգելու մասին որոշումն ընդունվում է Բարձրագույն խորհրդի կողմից:

Նշված մեխանիզմի գործողության դադարեցման դեպքում անդամ պետությունները եւ Հանձնաժողովը պարտավոր են ամբողջ ծավալով ապահովել այն ֆինանսական պարտավորությունների կատարումը, որոնք առաջացել են դրա գործողության շրջանակներում արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծերի իրականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին Հանձնաժողովի խորհրդի կողմից ընդունված որոշումների հիման վրա՝ այդ նախագծերի իրականացման ամբողջ ժամկետի ընթացքում:

Տվյալ պարտավորությունն ուժի մեջ է մնում ընդհուպ մինչեւ դրա ամբողջական կատարումը՝ անկախ մեխանիզմի գործողության դադարումից:»:

Հոդված 2

Սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստացման օրվանից:

Կատարված է *Մոսկվա* քաղաքում 202*3* թվականի *մայիսի 25*-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերեն:

Սույն արձանագրության բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն արձանագրության ավանդապահ, անդամ պետություններից յուրաքանչյուրին կուղարկի դրա հաստատված պատճենը:

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետության կողմից՝** | **Բելառուսի Հանրապետության կողմից՝** | **Ղազախստանի Հանրապետության կողմից՝** | **Ղրղզական Հանրապետության կողմից՝** | **Ռուսաստանի Դաշնության կողմից՝** |
| [*ստորագրություն*] | [*ստորագրություն*] | [*ստորագրություն*] | [*ստորագրություն*] | [*ստորագրություն*] |

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2023թ. մայիսի 25-ին քաղաք Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացվելիս ֆինանսական աջակցություն տրամադրելու մասով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**